ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 157 – Ա **06 մարտի 2019 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ <<ԸՆԹԵՐՑՄԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ 2019>> ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Մշակութային օրենսդրության հիմունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի և 19-րդ հոդվածի դրույթներով.

որոշում եմ՝

1. Հաստատել՝

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում <<Ընթերցման օլիմպիադա 2019>> մրցույթի մարզային փուլի անցկացման ժյուրիի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում <<Ընթերցման օլիմպիադա 2019>> մրցույթի մարզային փուլն անցկացնել Գավառի Ա. Իսահակյանի անվան N4 հիմնական դպրոցում՝ 2019 թվականի մարտի 20-ին, ժամը 10:00-ին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

06.03.2019

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ՝
ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019 թվականի մարտի 6 -ի
N 157-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
<<ԸՆԹԵՐՑՄԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ 2019>> ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺՅՈՒՐԻԻ

Սաֆարյան Համբարձում- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ

Չքոյան Արփիկ - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

Ղազարյան Նորիկ - Հայաստանի գրողների միության մարզային բաժանմունքի նախագահ /համաձայնությամբ/

Ասատրյան Տիրուհի - Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

Սամվելյան Ռուզաննա- Մարտունու N 2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

Մինասյան Անահիտ – Լճավանի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

Սաղաթելյան Ռուզան - Սևանի N 1 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

Օհանյան Փառանձեմ- Ճամբարակի ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ /համաձայնությամբ/

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ**